

## ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԽՈՐԱԳԻՐՆԵՐ

Ստորև կը ներկայացնենք Չորեքշաբթի, 21 Մայիս 2008-ի առաւօտեան լոյս տեսած լիբանանեան մամուլի գլխաւոր խորագիրները.

### ՆԱԿԱՐ

✪ Բաթար. Լիբանանին շնորհաւոր ըլլայ համաձայնութիւնը:

✪ Խորհրդարանը վաղը՝ Գինզաբթի կ'ընտրէ Լիբանանի Կառավարութիւնը:

✪ Պէյրուսի ընտրաշրջաններուն բաժանումը. 10՝ Մազրայիս, 5՝ Էշրեֆիէին, 4՝ Պաշտալիս: Եզրափակիչ հաղորդագրութիւնը կը նշէ կազմակերպութիւններուն զենքը:

✪ Շոցի գերատիճանը կ'աջակցի Տոհայի երկխօսութեան:

✪ Թեհրան կը մերժէ Գրգալլայի զինաթափումը:

✪ Խալիլ Չատ. Գրգալլայի զինաթափումը կ'ենսական խնդիր է:

✪ Օպամա կը մտնէր վճռումին, սակայն Զլիսթըն չի յանձնուիր:

✪ Եգիպտացի պատասխանատու մը կը հաստատէ, թէ Խորալէ աջակցութիւն յայտնեց Կազայի մէջ հանդարտեցումի առաջարկին:

### ԱՆՈՒՄԱՐ

✪ Իշխանամետներն ու ընդդիմադիրները արշալոյսին Տոհային կը հաստատեն լուծումի լուրջ հաւանականութիւնները:

✪ Գրգալլայի ընտրութիւնը կը բովանդակէ Պէյրուսի մէջ ընտրական բաժանումը եւ կառավարութեան մէջ «երաշխաւորող մէկ-երրորդ»-ը:

✪ Կը նախատեսուի Սըլէյմանին նախագահ ընտրութիւնը, տիպիկ մասնակիցներուն Բաթարէն վերադարձնել ետք:

### ՄՈՒՍԹԱԲՊԱԼ

✪ Խորհրդակցութիւնները անել ճամբու մը հասնելն է Բաթարի վարչապետը Տոհայի մէջ մտաւ հարկադրուելէ ետք, արաբները կ'առաջարկեն լուծումի բանաձեւ մը:

✪ Ընդդիմութիւնը պայմանաժամ կը պահանջէ պատասխանելու համար:

✪ «8 Մարտ»-ը շատ դժգոհ է արաբական երկու առաջարկներէն:

✪ Ժաաթա. «Խնդիրը Գրգալլայի զենքն է, եւ ոչ մէկէն բերանացի երաշխիք կ'ընդունին»:

### ՀԱՅԱԹ

✪ Առն իշխանամետները կ'ամբաստանէ ըսելով, թէ մայրաքաղաքը կը բաժնեն իրենց ուզածին պէս:

✪ Մեծամասնութիւնը կը սպասէ արաբական յանձնախումբի երաշխիքներուն:

### ՏԻԱՐ

✪ Տոհայի համաձայնութիւնը կը յայտարարուի առաւօտեան ժամը 10:00-ին եւ երկխօսութեան մասնակիցները կը վերադառնան Լիբանան:

✪ Նախագահ Պըրրի կը մտնէ 10 Յունիսի Նիստը մտնելու թուականի մը, Սըլէյմանը ընտրելու համար:

### ՍԱՓԻՐ

✪ Նստացոյցի վերացում եւ Սըլէյմանի ընտրութիւն, 48 ժամերու ընթացքին:

✪ Ընդդիմութիւնը կը խլէ «երաշխաւորող մէկ-երրորդը»:

✪ Տոհայի մէջ լուծումը կը ճիւղ արեւածագին:

✪ Պէյրուսի բաժանումը՝ համաձայնութեամբ:

✪ Գործակցական խորհուրդի երկիրներուն ղեկավարները «Լիբանանը Շոցի կարեւոր խնդիր մըն է»:

✪ Չորս նահատակներ՝ ներառեալ մանուկ մը, Կազայի մէջ:

✪ Իսրայէլ հանդարտեցում մը կը նախատեսէ քանի մը օրերու ընթացքին:

### ՊԱՅՐԱԲ

✪ Մեծամասնութիւնն ու ընդդիմութիւնը համաձայնեցան:

✪ Գրգալլայի ընտրութիւնը կը յայտարարուի այսօր:

### ԼԻՈՒԿԱ

✪ Բաթարի էմիրը կը միջամտէ ծագած խոչընդոտներու վերացնելու համար:

✪ Թեհրանի եւ Դամասկոսի հետ հաղորդակցութիւններ, որոնք կը նախորդեն յայտարարութեան:

✪ Տոհայի համաձայնութիւնը կ'ընտրէ նախագահը, կը կազմէ կառավարութիւնը եւ կը գծէ նոր հաւասարակշռութիւնները:

### ՇԱՐԲ ԱՌԻՍԱԹ

✪ Պըրրի՝ «Շարք Աուսաթ»-ին. «Կը սպասեմ «սպիտակ մուխ»-ը»:

✪ Ընդդիմութիւնը Լիբանանը «կ'արգելափակէ» 24 ժամ, Տոհայի մէջ:

### ՇԱՐԲ

✪ Արաբական նախարարական յանձնախումբը դժգոհ՝ ընդդիմութեան:

✪ «Սպիտակ մուխ»-ը այսօր կը բարձրակարգ Տոհային:

✪ Պէյրուսի հակադրող բաղկացում:

✪ Խորհրդակցութիւնները շարունակուեցան մինչեւ արեւածագ:

Հ.Մ.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ

Հ.Մ.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ

## ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Հովանաւորութեամբ՝ **Ս.Գ.Յ.Կ. ԿՈՒՇՈՒՆԻ** Մասնաճիւղի

Մասնակցութեամբ՝

**ՊԵՐՃ ՆԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԵՒ ԱՃԱԿԱՐԱՐ ՏԱՆԻԻ**

Ընկերակցութեամբ՝

**ՅՈՎԻԿ ՆԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԵՒ ԻՐ ՆՈՒԲԱՎԵՆՈՒՄԲԻՆ**

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 31 Մայիս 2008, երեկոյեան ժամը 9:00-էն սկսեալ, «Chateau Raphael» շքեղ պանդոկի ծովագերեայ Terrasse-ին վրայ, Մասնակցելու:

## ՍՏԱՑԱՆՔ

«ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳԱՆԻՉԸ»

Գ. ՍԱՅԱԿ ԿՐԻ.

ԲԵՇԻՇԵԱՆ (1917-2005)»

Մեծամասնութեան 25

«ԽԱՆՁԱՐՈՒՐ»

Մերոյ Գայունի

«Սուրբ Ծննդեան Ազգային-Սուրբգրային Երգայիսան Թատրախաղ»

Մեծամասնութեան 30

## ԼՈՅՍ ՏԵՍԱՒ «ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ»-Ի Ա. ՀԱՏՈՐԸ

«Հայկական հանրագիտարան» հրատարակչութիւնը լոյս ընծայեց «Դպրոցական մեծ հանրագիտարան»-ի առաջին հատորը: Ըստ խմբագրութեան գլխաւոր խմբագիր-տնօրէն Յովհաննէս Այվազեանի, նոր հրատարակութիւնը մեր ունեցած հանրագիտական գրականութենէն կը տարբերի եւ ընդգրկման ծաւալով, եւ մատուցման եղանակով: Հանրագիտարանը բաղկացած է երկու գիրքէ, իրաքանչիւրը՝ երկու հատորով: Առաջին երկու հատորներուն մէջ ներկայացուած են բնական եւ ճշգրիտ գիտութիւններուն, աշխարհագրութեան ու երկիրներուն, բժշկագիտութեան եւ առողջապահութեան մասին յօդուածներ, հայկական բնաշխարհի բոյսերն ու կենդանիները: Երկրորդ գիրքի հատորներն ամբողջովին նուիրուած են պատմութեան, լեզուի, գրականութեան, արեւմտի, մշակոյթի, ճարտարապետութեան եւ մարդասիրական ոլորտի այլ հասկացութիւններուն:

## Հ.Մ.Մ. «ՎԱՆԻԿ»-Ի ՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Հ.Մ.Մ.-ի պատանիներու «Վանիկ» խումբը շարունակելով յաղթանակներու իր արշաւը, Կիրակի 18 Մայիս կէսօրէ ետք ժամը 5:00-ին, Պուրճ Յամուտի Պօղոս Արիսի մարզադաշտին վրայ բարեկամական մրցում մը կատարեց եգիպտացի մարզիկներէ կազմուած Չամալեք խումբին դէմ եւ 5-4 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց:

Հ.Մ.Մ. «Վանիկ»-ի կողմը նշանակեցին Սամուէլ Սանտսեան (2), Գեորգ Վարժապետեան, Անտո Սալպաշեան եւ Նարեկ Եագուպեան:

## ՀԱՅ ԱԲՏ. ԹՈՐՈՍԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԱՅԻՆ ՀԱՄԵՐԳ

Խմբավար՝

**Տիկ. ՆԵԿՏԱՐ ՓԱՆԱՇԵԱՆ**

Դաշնակի ընկերակցութիւն՝

**ՕՐԴ. ՄԱՐԻԱ ՓԱՆԱՇԵԱՆ**

Ուրբաթ, 30 Մայիս 2008, երեկոյեան ժամը 8:00-ին, Յովհաննէս Պօղոսեան սրահին մէջ, Պուրճ Յամուտ:

ՀՐԱԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԼԱՅՆՕՐԵՆ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ

Հայաստանը աշխարհին ներկայացնելու համար այս տարի սպանական «Կոպա» ընկերութիւնը պիտի մասնակցի մէկ ժամն աւելի տեղադրութեամբ Հայաստանի մասին վաւերագրական ժապաւեն նկարահանելուն:

Այս մասին յայտնեց Հայաստանի տնտեսութեան նախարար Ներսէս Երիցեան տեղեկացնելով, որ վերոյիշեալ ընկերութիւնը լրացուցիչ տեսանկարները Հայաստանի եւ սփիւռքի մէջ հեռարձակելու իրաւունքը պիտի տրամադրէ Հայաստանին, իսկ մէկ ժամուան ժապաւենի իրաւունքը՝ իրենցն է: Ըստ նախարարին, 500 միլիոն մարդ հնարաւորութիւն պիտի ունենայ այդ ժապաւենը դիտելու:

Նշենք, որ 2007-ի պետական ամսական զբոսաշրջութեան ոլորտին տրամադրուած է աւելի քան 241,9 միլիոն դրամ:

## Մ Ա Շ Ա Ջ Դ

Տիար Վարուժան Կանճեան եւ զաւակը՝ Նարեկ Տէր եւ տիկ. Հրաչ եւ Զրիստին Կանճեան եւ զաւակուց Տիկ. Արաքսի Ապու Մարաքեան եւ դուստրը՝ Այտա Տէր եւ տիկ. Սթիւ եւ Լենա Ապու Մարաքեան եւ զաւակուց Տէր եւ տիկ. Սիրիան եւ Ռիթա Կանճեան եւ զաւակուց Տէր եւ տիկ. Լենոն եւ Օսան Կանճեան եւ զաւակուց Տիկ. Մարո Աբելեան Կանճեան եւ Ապու Մարաքեան ընտանիքներ Աստուրեան եւ Իզմիրեան ընտանիքներ Բեյրութեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գումար իրենց կնոջ, մոր, մեծ մոր, զաւակին, հորաքրոջ եւ հարազատին՝

ՍՕՍԻ ԽԱՆՃԵԱՆ-Ի

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 20 Մայիս 2008-ին, յետ կարճատե հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Չորեքշաբթի, 21 Մայիսին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Յամուտի Ազգային գերեզմանատունը:

Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:

Ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալին բնակարանը, Ռապիէ, թիւ 9 թաղ, A100 շէք, 3-րդ յարկ, Չորեքշաբթի 21, Գինզաբթի 22 եւ Ուրբաթ 23 Մայիսին:

Այս տխուր առիթով տր է տիկ. Ահարոն Շարտըմեան եւ զաւակուց իրենց խորագրած ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալին ընտանեկան պարագայներուն եւ հարազատներուն:

## ARARAD DAILY NEWSPAPER

Tel. - Fax: 01-56 55 99

P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON

Website: www.araraddaily.org e-mail: ararad@terra.net.lb

جريدة يومية سياسية ارمنية تصدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.) المدير المسؤول: ابيسوغوم كريسچيكيان

## ԱՆԳԱՐԱ ՏՈՒՆ ԿՐԱՅ ԿԱՆՉԵԼ ԱՐԺԱՆԹԻՆԻ ԴԵՄՊԱՆԸ

Թրքական «Թուռեյզ Զաման» օրաթերթը կը հաղորդէ, որ Անգարա կը ծրագրէ Արժանթինի մէջ իր դեսպանը «քաղաքական խորհրդակցութեան» համար տուն կանչել՝ ի պատասխան Արժանթինի մէջ ընդունուած Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ օրէնքներուն, պետական որոշումներուն եւ յայտարարութիւններուն:

Թրքական դիւանագիտական աղբիւրներ յայտնած են, որ Արժանթինի հետ «երկկողմանի յարաբերութիւնները հաւանաբար մօտ առնեն բաւական աշխուժութիւն դիմագրաւել», աւելցնելով, թէ կը նախատեսուի, որ Պուէնոս Այրեսի մօտ Թուրքիոյ դեսպան Հայրը Հայրեթ Եալաւ մօտիկ ապագային այս երկրին հետ երկկողմանի յարաբերութիւններու ընկարկման համար Անգարա կանչուի՝ «քաղաքական խորհրդակցութեանց համար»:

Յիշեցնենք, թէ Ապրիլ 25-ին Թուրքիոյ իշխանութիւնները խստօրէն դատապարտեցին Հայկական Ցեղասպանութիւնը ճանչցող Արժանթինի խորհրդարանական նորագոյն բանաձեւը, միաժամանակ ջնջելով պետական նախարարի մը Արժանթին այցելութիւնը:

Արժանթին Հայկական Ցեղասպանութիւնը ճանչցող առաջին պետութիւններէն մէկն էր:

## ՄՈՍԿՈՒՆ ՎԱՂԱԺԱՍ ԿԸ ՀԱՄԱՐԸ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԼԳ-Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՕՍԻԸ

ԵԱՀԿի Մինսքի խումբի ռուս համանախագահ Եւրի Մերզլեաքով յայտարարած է, որ տակաւին կանուխ է բանակցութիւններու գործընթացին Լ՝ՆՆային Դարաբաղի մասնակցութեան մասին խոսիլը:

«Այն բանէն ետք, երբ հակամարտութեան կարգաւորման հիմնարար սկզբունքներուն հաւանութիւն կը տրուի, ոչինչ կը խանգարէ տարածաշրջանի ներկայացուցիչներուն մասնակցելու Լեռնային Դարաբաղին վերաբերող համաձայնագրի մշակման», «Թրէնտ»-ին հեռախօսով Մոսկուայէն ըսած է Եւրի Մերզլեաքով:

Ինչպէս արդէ հաղորդուած է, Ս. Փեթրոսպոլի մէջ ԱԳԳ պետութիւններու ղեկավարներու ոչ պաշտօնական գագաթնաժողովի շրջագծին մէջ ծրագրուած է Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու հանդիպումը:

Այդ կապակցութեամբ ռուսաստանցի համանախագահը նշած է, որ Հայաստանի նոր նախագահը հիանալի իրազեկուած է՝ ինչպէս կը զարգանայ գործընթացը Լեռնային Դարաբաղի շուրջ: «Կը կարծեմ, որ այդ հանդիպումը շատ գործնական կ'ըլլայ, եթէ երկու կողմերը կառուցողականութիւն ցուցաբերեն եւ պատրաստ ըլլան ընտանեկան հակամարտութեան կարգաւորման հիմնարար սկզբունքները», աւելցուցած է Եւրի Մերզլեաքով:

## ՔՈՐԱՆԻՆ ԿՐԱՅ ՆՇԱՆԱՌՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐՁԱԿԱՉԵՆ ՄԸ ԿԸ ՎՏԱՐՈՒԻ

Իրաքը բռնագրաւող ամերիկեան բանակը յայտարարեց, որ ամերիկացի արծակազէն մը Իրաքէն տուն դրկուեցաւ: Զորանի մէկ օրինակը նշանառութեան վարժութեան համար իբրեւ թիրախ օգտագործելուն պատճառով: Իրաքի ոստիկանութիւնը յայտնեց, որ իսլամական սրբազան գիրքը գտնուած է փամփուշտներով ծակծկուած վիճակի մը մէջ: Ամերիկեան ուժերը բանբեր մը յայտնեց, որ իսլամոյ առարկայ գիտնորը կարգապահական տնօրինումի պիտի ենթարկուի: Անոր ինքնութիւնը չբացայայտուեցաւ, սակայն ըստ տեղեկութեանց, ան արծակազինութեան բաժանմունքին մէջ յիսնապետ մըն է:

Պաղտատի մէջ գործող ամերիկեան ուժերու հրամանատար գոր. Ճեֆրի Համըտ անձնապէս ներողութիւն խնդրած է Ռատ-Լանիայի շրջանի տեղական սիւննի ղեկավարներէ: Ան շրջան իր այցելութեան ընթացքին դիմաւորուած է ցեղախումբի մը մաս կազմող հարիւրաւոր ցուցարարներուն կողմէ: